


ՏԱՍՆ ԵՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ



Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ:
Աւանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպէկ:

ԵԿՈՂ 1888 ԹԻԻՆ

ՄՇԱԿ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԿԻՐ

Կը հրատարակի Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոգրամայով: Մենք կը ստանանք սեփական
ՀԵՌԱՅԻՐՆԵՐ:

«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլ է, վեց ամսվանը 6 ռուբլի:
Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բարձրագույն և Բարձրագույն փողոցների ան-
կիւնում, Թամարիսի տանը):

Կայսերութեան ուրիշ քաղաքներէ «ՄՇԱԿ» գրվելու համար պէտք է գրել հետեւեալ հա-
ցեով. ТИФЛИСЪ, Редакция газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du jour-
nal arménien «MSCHAK».

Առաջիկայ տարվայ «ՄՇԱԿ» պրոգրամը նոյն կը լինի, այսինքն I. Առաջնորդող յօդուած-
ներ. II. Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ընդհանուր յօդուածներ (հասարակական, դատաստանական, տնտե-
սական և այլն) թղթակցութիւններ, լուրեր. III. Կառավարչական կարգադրութիւններ. IV. ԱՐՏԱՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ընդհանուր յօդուածներ, թղթակցութիւններ, լուրեր. V. ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. VI. ՀԵՌԱՅԻՐ-
ՆԵՐ և ԲՈՐՈՍԱ. VII. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ֆելետոններ, ճանապարհորդութիւններ, աղագրական,
ուսումնական յօդուածներ, վէպեր և այլն. VIII. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

Յայտարարութիւններ ընդունվում են ամեն լեզուներով: Վճարը՝ բառին 2 կոպէկ: Տաճն անգա-
մից աւելի ապովող յայտարարութեան համար նշանաւոր գինում կը լինի:

Խմբագիր-հրատարակող ԳԻՐԿՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

Թիֆլիսի նահանգի աշխուականների առաջնորդ ԻՇԽԱՆ ԻՎԱՆ ԿՕՆՏԱՆՏԻՆ-
ՆՕՎԻԶ ԲԱԳՐԱՏԻՈՆ-ՄՈՒՆԻՐԱՆՍԿԻ Թիֆլիսի նահանգի աշխուականների կողմից
յայտնում է, որ Հինգշաբթի, Կոյեմբերի 5-ին, առաւօտեան 11 ժամին, Անչիսաւ-
որ եկեղեցում կատարվելու է Հոգեհոգիստ աշխուականների նախկին առաջնորդ,
Հանգուցեալ ԳԻՄԻՏԻ ԻՎԱՆՆՕՎԻԶ ԿԻՊԻՆԻՅԻ յիշատակին:

1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կ. Պօլսի հայոց պատրիարքի հրաժարականը.—
Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ներքին լուրեր.—ԱՐՏԱ-
ՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Թիւրքիայից. Արտա-
քին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱՅԻՐՆԵՐ.—
ԲՈՐՈՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱ-
ԿԱՆ. Գործնական մարզիկ Ամերիկայում.

Կ. ՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԻ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԸ

Յայտնի է որ մինչև այժմ Կ. Պօլսի Յա-
րուլիսն պատրիարքը ոչինչ ժողովրդակա-
նութիւն չէր վայելում Թիւրքաց հայերի
մէջ. նա համարվում էր կատարելապէս
կառավարչական մարդ, Թիւրքաց կառա-
վարութեան հըռ հպատակ, Բ. Գրան է-
ֆէնչիների կուսակցութեան, և ոչ թէ ազ-
գի շահերի կուսակցի:

Բայց ահա վերջին դէպքը, պատրիարքի

իր պաշտօնից հրաժարական տալը, լինելի
վերադարձրէց նրան ամբողջ Կ. Պօլսի և
ամբողջ ազգի համակրանքը: Այս դէպ-
քում Յարուլիսն պատրիարքը ջանա-
թեամբ և արժանաւորութեամբ վարվեց:

Կ. Պօլսի հայոց քաղաքական ժողովի
անդամները ընտրված էին և նրանց ընտ-
րութիւնը վաւերացրած էր արդէն պատ-
րիարքի կողմից, իսկ Բ. Գրան մի ամբողջ
ամիս ձգձգելով իր կողմից այդ ընտրու-
թիւնների վաւերացնելը, ինչպէս երևում
է, չէր էլ կամենում ամենեւին վաւերաց-
նել քաղաքական ժողովի նոր կազմակեր-
պութեան ընտրութիւնները, մի և նոյն
ժամանակ ականջ դնելով այլ և այլ ամ-
բաստանութիւններին հայոց ազգային ժո-
ղովի և պատրիարքի դէմ: Պատրիարքի
ինքնասիրութիւնը վիրաւորված էր, նրա
համբերութեան պարզը հատել էր, և ա-
հա նա ներկայանում է արդարադատու-
թեան մինիստրին և խիստ խօսքերով բո-

ղորում է կառավարութեան կամայականու-
թեան դէմ: Մեր թղթակցին ասում է որ
արդարադատութեան մինիստր ձիվէթ-
փաշան շուտաւ չէր մնացել, սովոր լինե-
լով Յարուլիսն պատրիարքին միշտ հըռ,
հնազանդ ծառայ տեսնել Թիւրքաց կա-
ռավարութեան, մինիստրը, ինչպէս ասում
են, իր աչքերին ու ականջներին հաւատ
չէր ընծայում:

Թիւրքաց կառավարութիւնը աշխատում
է չընդունել պատրիարքի հրաժարականը,
յորդորում է նրան նորից յետ առնել իր
հրաժարականը, բայց պատրիարքը անտես
է առնում կառավարութեան հրաւերները
և չէ էլ դուրս գալիս երուսաղէմստինից:
Ինչպէս երևում է Բ. Գրանը դժուար կա-
ցուլթեան մէջ է դրված այդ հրաժարակա-
նով և, ինչպէս մայրաքաղաքի լրագիրնե-
րին հաղորդում է «Հիւսիսային գործակա-
նութիւնը», Թիւրքաց մինիստրական խոր-
հուրդը այս օրերս արտակարգ նիստ է
ունեցել, որտեղ ըննութեան առարկայ էր
հայոց խնդիրը:

Արդեօք հայոց խնդիրը, Բերլինի կոն-
գրէսի որոշմամբ Թիւրքաց Հայաստանին
խոստացված վերանորոգութիւնների չը
կատարելը, կապ ունի՞ Գարուլիսն պատ-
րիարքի բողոքի, պահանջների և հրաժա-
րականի հետ,—այդ մեզ համար դեռ ևս
մութ է մնում: Միայն մի իրողութիւն
հաստատ է, այն է որ Գարուլիսն պատ-
րիարքի արած քայլը, նրա քաջասիրտ
վարմունքը չեղած յուզմունք է գցել Բ.
Գրան շրջաններին մէջ:

Բ. Գրանը երևի համոզվել է այժմ որ
անձինքներ փոխվելով, ժամանակի պահան-
ջը չի փոխվի: Թիւրքաց կառավարութիւնը
հաւատացած էր, երևի, որ հանգուցեալ
Ներսէսի դիմադրական ոգին մի շինծու,
արուեստական, բուն անձնական բան էր և
արտայայտութիւն չէր ազգի ձգտումների:
Նրա մահից յետոյ կառավարութիւնը գոհ
է հանգուցեալ էր որ Ներսէսի յաջորդի մէջ
գտաւ մի կառավարչական մարդուն, որ
երբէք չի բողոքել, այլ միշտ կը լինի իր
բոլոր կարգադրութիւնների մի հըռ և
կոյր գործիչ: Այժմ երևի համոզվել են
Թիւրքաց մինիստրները որ ինչ մարդ էլ
լինի Կ. Պօլսի հայոց պատրիարքը, նա չէ
կարող վերջ ի վերջոյ արտայայտել չը
հաւանալ ազգի պահանջներին, չէ կարող
չընթանալ ժամանակի պահանջներին հա-
մեմատ:

Ժամանակի պահանջներին, Թիւրքաց
հայերի անհրաժեշտ կարիքներին լը-
րում տալը կարելի է, այո, ժամանակա-
ւորապէս յետաձգել, բայց իսպառ խախտ-

նել երբէք չէ կարելի: Եւ ինչքան երկար
ժամանակ կը յետաձգվեն այդ պահանջ-
ները, այնքան մի օր աւելի մեծ ոյժով կը
ներկայանան նրանք, հանդէս դուրս կը
գան նրանք՝ անյապաղ լուծում պահանջե-
լով:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԲԱԹՈՒՄԻՅ մեզ գրում են: «Այս օրերս մին
միւսի ետեից երեք թատրոնական ներկայա-
ցումներ ունեցանք, այն էլ երեք զանազան լե-
զուներով: Հոկտեմբերի 26-ին հայ սերողները փո-
ղովիներից բաղադրած ներկայացում տուեցին
յօգուտ տեղիս հայոց դպրոցի, նոյն ամսի 28-ին
ուսու թատրոնատերերը ուսուներէն մի ներկայա-
ցում տուեցին յօգուտ նորերում վախճանված և
ամենքից սիրված ու յարգված բժիշկ Կրասովսկու
որը ընտանիքի, վերջապէս 29-ին հոկտեմբերի
նոր կազմված վրաց սերողների մի խումբ վրա-
ցերէն լեզուով մի ներկայացում տուեց, որի ար-
դեւքը յատկացվեցաւ տեղիս վրաց ուսումնարա-
նի օգտին»:

ՂԱԼԱՐԻՅ մեզ գրում են հետեւեալ: «Մեր քա-
ղաքում ապրելը օրից օր դժուարանում է: Ճնշող
սնտեսական հանգամանքները քանի դնում են
ծանրանում են աղքատականութեան վրա: Ով որ իր
մէջ մի փոքր բարոյական ոյժ է դնում և քիչ թէ
չատ նիւթական միջոց էլ ունի, նա ամեն կերպ
աշխատում է հեռանալ Ղալարից և ուրիշ տեղ
բաղդ որոնել: Բայց այս տեսակների հեռանալը,
ի հարկէ, զգալի կորուստ է մնացած աղքատա-
կութեան համար: Այդպիսի մի զգալի կորուստ
օրերումս ունեցաւ Ղալարը, քանի որ մեր քաղա-
քի գործունեայ, աշխու և եռանդոտ գործիչներից
մէկը, Աստուածատուր Կաճկաճեան, որ տարինե-
րի ընթացքում մեծ ծառայութիւններ արաւ զըզ-
լարցիներին, ակամայ ստիպվեցաւ թողնել իր
ձննդավայրը և ընտանիքով տեղափոխվել Բաղու»:

ՄՕՍԿՎԱՅԻՅ մեզ գրում են որ յօդուտ Զեյ-
թունի հրկիզեալների այդտեղ սկսած հանգանա-
կութիւնը շատ աղղ կերպով է առաջ դնում
Մօսկվայի հայերը այդ նպատակով արդէն 3000
րուբլու չափ փող են հաւաքել իրանց մէջ:

ԱԽԱՅԻՅ մեզ գրում են որ 27-ին հոկ-
տեմբերի թեմական առաջնորդ, սրբազան Արիս-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՐԿԻԿ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ

Բարեյաջող պայմաններ ինքնագործունէութեան
և հնարաղիտութեան զարգացման համար.—Թո-
մաս Էդիսոն:

Սակայն ջանիլ Էդիսոնի այդ սկզբնական ձեռ-
նարկութիւնները ողբերգական վախճան ունե-
ցան: Երկարատեւ վաղուցից ցնցումից մի անգամ
Էդիսոնի լաբորատորիայի յատակի վրա ընկաւ մի
փոքրիկ շիշ ֆոսֆորով և կտորվելով, հրդեհ գը-
ցեց: Կօնդուկտը վրա հասնելով իր ժամանա-
կին, հանգրցից կրակը, բայց վաղօնի պատուհա-
նից դուրս գցեց նոյնպէս բազմաթիւ շիշեր և
սպաղարական տառեր և խիստ յանդիմանեց պա-
տանի քիմիկոսին: Ժողովելով մնացորդը խնդ
Թոմաս Էդիսոն իր բոլոր քիմիական դեղերը և
ռաւերը տեղափոխեց և դարանց իր հօր տան

ստորին յարկում, որ դանդաղ էր Միչիգանի մի
փոքրիկ քաղաքում: Հետո ինչ անկէն սկսեց
«The Paul Pry» անունով մի ուրիշ լրագիր հրա-
տարակել, որը իր սկզբնական «Հեթօղից» աւելի
մեծ և աւելի լաւն էր: Սակայն, դժբաղդաբար,
հնարագէտ երկտասարդ լրագրագետը յափշտակ-
վեց իր գործով և ինքն ևս չը նկատեց, թէ ինչ-
պէս վիրաւորեց մի ստորագրողի ինքնասիրութիւ-
նը: Նա (ստորագրողը) կատաղած այդ հանգա-
մանքից, հետամուտ եղաւ Էդիսոնին գետն ափի
վրա, բռնեց նրան և գցեց ջուրը. բաղադրա-
պէս, Էդիսոն լաւ լուրջորդ էր և ողջ ու առողջ
դուրս եկաւ ափը. սակայն, հրատարակչական և
ռանդը երկար ժամանակով ստուգաւ նրա մէջ:

Էդիսոնի տոկունութիւնը և եռանդը՝ մտադը-
ված նպատակին հասնելու համար, այն յատկու-
թիւններն ունէին, որ եթէ նա մինչև անգամ հը-
նարաղիտութեան տաղանդ չունենար, այնու ա-
մենայնիւ կը հասնէր հարստութեանը և փառքին
ուրիշ ճանապարհներով: Չորս տարիներ ընթաց-
քում, որ նա անցկացրեց երկաթուղու գնացքում
լրագիրներ տարածողի պաշտօնում, նա ժողովեց
երկու հազար դոլար փող, և իր ամբողջ ազատ
ժամանակը նա նուիրում էր զըբերի ընթերցա-

նութեանը: Դիտարոյտ քաղաքի հրապարակական
զրադարանում Այդ ընթերցանութիւնը, իրաւ է,
առանց որ և է սխառեմայի էր կատարվում և չէր
կարող առանձին օգտակար լինել նրան, երբ որ,
ինքն Էդիսոն խոստովանվում է, թէ ինքն դեռ
այնքան անփորձ էր, որ սկզբում մտադրվել էր
կարդալ գրադարանի բոլոր գրքերը այն կարողով
որով դարձված էին, և իրաւ, 15 ֆուտ երկարու-
թիւն տանցող չաբէր բոլոր գրքերը կարդաց, իսկ
յետոյ, ի հարկէ, թողեց այդ ապարդիւն ժամա-
վաճառութիւնը: Էդիսոնի մի փոքր օտարտոի բը-
նաւորութիւնը չէր արդեւում նրան մի և նոյն
ժամանակ շատ գործնական լինել: Հարուստակեւ
լրագիրների առևտուրը գնացքներում, նա, պա-
տեղադրի հէնց սկզբում, սկսեց հեռագրով հա-
ղորդել հարևան կայարաններին լրագրական յօդ-
ածներին վերագրելները: Թարմ լուրերի այդ վեր-
նագիրները յարուցանում էին ճանապարհորդների
հետաքրքրութիւնը, և նրանք առնում էին Էդիսո-
նի լրագիրը: Այդ սխառեման մեծ օրուտներ տը-
ւեց նրան և իրան Էդիսոնի հետաքրքրութիւնը
յարուցեց դէպի հեռագրական գործը: Այդ ժա-
մանակներին մօտ, Էդիսոն, իր կեանքը վտանգի
տակ գցելով, հանեց մի հեռագրական պաշտո-

նեայի որդուն մօտեցող երկաթուղու գնացքի
տակից: Հնորակալութեան փոխարէն երկաթի
հայրը սովորեց Էդիսոնին հեռագրական գործը
Այդ գործը Էդիսոն այնպէս հաւանեց, որ խնդր
թողեց իր առևտուրը և հեռագրական պաշտո-
նեայի տեղ գտաւ շաքաթական վեց և կէս դոլ-
լար ջնջին ռոճիկով, և օր ու գիշեր աշխատում
էր կատարելագործվելու նպատակով: Վեց ամսայ
ընթացքում նա մի քանի պաշտօններ փոխեց,
աշխատելով Միչիգանում, Կանադայում, Ինդիա-
նայում և ուրիշ տեղերում, և արդէն 17 տարեկան
հասակում նա արաւ իր առաջին հեռագրական
գիւտը—որ կրում է «աւտօմատիական կրկնող»
անունը:

Այդ մի նշանաւոր աշուղութիւն էր այդպիսի
մի ջանքի պատանու համար, և զարմանալի չէ որ
նա ամբողջապէս նուիրեց իրան գիտնական հե-
տադասութիւններին: Մեմֆիսում նրան մինչև
անգամ պաշտօնից զրկեցին այն պատճառով որ
նա «ցնորամիտ» էր, զբաղված իր «վայրենի գա-
ղափարներով»: Լուրով լրում նա վայր գցեց ծը-
ծմբաթմբուով լի մի աման, այրեց իր սենեակի
յատակը և ստորին յարկում գտնվող սենեակի ա-
ռաստաղը: Յինցիհատում պաշտօնադուրկ արին

4—15